ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ-ն ՀԿԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/4 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
7	ՀՀ արդարադատության նախարարի 2012թ. մարտի 7-ի N 31-Ն հրամանով հաստատված Կեպի ամառային (ՁԼ 8-ը կցվում է)։ Կեպին սև գույնի կտորից է։ Կտորը՝ բամբակյա 100%, 1 քառ. մետր խտությունը 240-260 գրամ բաղադրությամբ։ Բաղկացած է թասակից և երկարացված՝ կոշտ պլաստմասե հովհարից։ Թասակը կարերով բաժանված է վեց հավասար մասերի, որոնց մեջտեղում ասեղնագործված են շրջանաձև անցքեր՝ օդափոխության համար։ Թասակի առաջնամասը ներսից կոշտացած սոսնձապատ ժապավենով է կպցված, որը ապահովում է ուղիղ և կլոր տեսք, թասակի ներսում յուրաքանչյուր կարի վրա փակված է նեղ տեքստիլային ժապավեն (ամուր և մաքուր տեսքի համար)։ Թասակը միացված է գլխահովհարին լայն տիսմայով։ Ետևի աջ մասում՝ մետաղական կարգավորիչ արծաթափայլ գույնով։ Թասակի կենտրոնում ամրացված է կլոր կոճակ, որը միացնում է թասակը և ապահովում արտաքին տեսքը։ Առջևի կենտրոնական մասում կարվում է 6.5սմ տրամագծով կլոր ասեղնագործված Հարկադիր կատարումն ապահովող ծառայության նշանը։ Գլխարկը պետք է ունենա կլոր թասակ։ Նախօրոք նմուշը պետք է ներկայացնել պատվիրատուի հանձնաժողովին, հանձնաժողովի կողմից պետք է հաստատվի և ընդունվի նորմերին համապատասխան կնիքով և չափսերով։ Ապրանքների խմբաքանակը հանձնել ներկայացված նմուշների համապատասխան։ Փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ 25 հատ պարկերով։ Պոլիէթիլային թափանցիկ պարկերը տեղադրել արկղի մեջ։ Արկղի վրա նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

И / П Армине Овсепян Элбек в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀԿԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/4 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
7	